Առավոտ
a r a v o t d a i l y
օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ
28/4124/ 16 փետրվարի 2012 հինգշաբթի
ISSN 1829-2224

Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

Ա

# Եվս $80 միլիոն

Համաշխարհային բանկը ՀՀ կառավարությանը 80 միլիոն դոլար է տվել՝ համայնքները տնտեսապես եւ սոցիալապես զարգացնելու համար: Ընդորում, հաշվի առեք, դա վարկ է: Այդ փողը, այսինքն, մեզ չեն նվիրում՝ տալիս են պարտքով: Դատելով պաշտոնական հաղորդագրությունից՝ այդ կլորիկ գումարը տրվում է «երրորդ գործառնություն ծրագրի շրջանակներում», ինչից կարելի է եզրակացնել, որ երկու անգամ նման գումար արդեն իսկ տրվել է: Գուցե Համաշխարհային բանկին դա առանձնապես չի հետաքրքրում, բայց մեզ՝ քաղաքացիներիս, որոնց երեխաներն ու թոռները պիտի փակեն այդ պարտքը, պիտի հուզի՝ այդ ո՞ր համայնքն է տնտեսապես եւ սոցիալապես զարգացել այդ վարկերի միջոցով: Գուցե օգնությունը զուտ տեխնիկական է՝ գալիս են արտասահմանցի մասնագետները, բացատրում են մեր գյուղացիներին, թե ինչպես է պետք կով կթել, ստանում են այդ խորհրդի համար, ասենք, 10 հազար դոլար աշխատավարձ ու վերադառնում են իրենց երկիրը: Բայց մենք կարծես թե այդ գործի տեղացի մասնագետներ էլ ունենք՝ սկսած վարչապետից: Կամ գուցե այդ փողերով կառուցվում է գյուղի ճանապարհը, հետո գալիս են անձրեւն ու ձյունը, եւ այդ ճանապարհը նորից հայտնվում է անմխիթար վիճակում: Համենայնդեպս, պարտք տվողը՝ բանկը, չպիտի առանձնապես մտահոգվի իր փողերի ճակատագրով, որովհետեւ սահմանված ժամկետում հետ կստանա իր գումարը եւ տոկոսները, դա պարտք վերցնողի խնդիրն է:

Ո՞վ պիտի հետեւի, թե ինչպես, ինչի համար է կառավարությունը վարկ վերցնում եւ ինչպես է այն ծախսվում: Իհարկե, Ազգային ժողովը: Եթե երեկ Ֆինանսների նախարարության եւ Համաշխարհային բանկի ստորագրած համաձայնագիրը խորհրդարան բերվի հաստատման այս երեք ամիսների ընթացքում, ապա, շատ հնարավոր է, դրա շուրջ բուռն քննարկում է սկսվելու, եւ պատգամավորները, կուրծք ծեծելով, բոցաշունչ ժողովրդահաճո ելույթներ են ունենալու: Բայց, ամենայն հավանականությամբ, այդ համաձայնագիրը բերվելու է արդեն հաջորդ Ազգային ժողովի կազմի հաստատմանը, եւ այդ դեպքում որեւէ խնդիր չի առաջանա՝ նիստերի դահլիճում նստած կլինեն իրենց նպատակներին հասած մարդիկ:

Նախընտրական շրջանում, վստահ եմ, շատ է խոսվելու միջազգային կազմակերպություններից վարկեր վերցնելու եւ դրանք անարդյունավետ օգտագործելու մասին: Դյուրահավատ ընտրողը այդ ճառերից գուցեեւ ազդվի եւ բացականչի՝ «վայ, էդ ինչ են անում, արի կլինի՝ ես ընտրեմ այս քննադատական ելույթ ունեցող ազնիվ տղերքին՝ նրանք փողերը քամուն չեն տալու»: Բայց մեզ՝ հասարակ քաղաքացիներիս, որոնք ոչ մեկին չեն հավատում, հետաքրքրում է ավելի կոնկրետ հարց: Թող հարգարժան կառավարությունը ցույց տա որեւէ գյուղ, որտեղ ՀԲ-ի փողերով սարքած գազատարի, ջրատարի կամ վերանորոգված դպրոցի շնորհիվ արտագաղթը այդ գյուղում կանգ է առել:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# Չիչիոլինան ինչպե՞ս մտավ խորհրդարան

Արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը երեկ կայացած խորհրդարանական լսումների ժամանակ՝ բացատրելով, թե ինչու չի կարելի անցնել հարյուր տոկոսանոց համամասնական ընտրակարգի, օրինակներ էր բերում: Օրինակներից մեկը վերաբերում էր «Ճամիրամին», որը տարիներ առաջ որպես կանանց խմբակցություն հայտնվել էր խորհրդարանում, ապա ասաց. «Հիշեք՝ ինչ քաղաքական ուժ էր «Ճամիրամը» եւ ինչպես հայտնվեց խորհրդարանում», ապա ասաց նաեւ. «Հիշեք, թե ինչպես իտալացի պոռնոաստղ Չիչիոլինան մտավ Իտալիայի խորհրդարան»: Արդարադատության նախարարը համոզված է, որ այս ամենի մեղավորը համամասնական ընտրակարգն է: Նախարարը համամիտ չէ այն ելույթներին, ըստ որոնց՝ «մեծամասնական համակարգը չարիք է»:

Կարդացեք էջ 3:




## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Օսկանյանը՝ հարաբերությունների ԱՊՊԱ՞

ՀԱԿ անդամ, Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության անդամ Գուրգեն Եղիազարյանը Վարդան Օսկանյանի «սերը» դեպի «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն պայմանավորում է նաեւ նրանով, որ հնարավոր է՝ Հանրապետականն ու «Բարգավաճ Հայաստանը» պայմանավորվածության են եկել իշխանության թեւերը կիսելու շուրջ: «Չի բացառվում, որ հետագայում ԱԺ նախագահի պաշտոնը հասնի Վարդան Օսկանյանին՝ որպես հետագայի ապահովության քվե»,- aravot.am-ին ասաց պարոն Եղիազարյանը: Նա նաեւ հումորով համեմատեց. «Վարդան Օսկանյանը Ռոբիկի (Ռոբերտ Քոչարյանի) եւ մյուսների հետագա հարաբերությունների ԱՊՊԱ-ն է»:

### Քաղաքական խաղաղություն եւ ոչ քաղաքական պատերազմ

«Մեր մոտեցումը շատ հստակ է, մենք վստահ ենք մեր հաղթանակի մեջ, մենք ամպագոռգոռ հայտարարություններ չենք անում: Մենք կբավարարվենք այն իրական հանրային աջակցությամբ, որը մեզ կտա մեր ժողովուրդը, բայց հավատացած եղեք, որ այդ հանրային աջակցության աստիճանը բավականին բարձր է, եւ դա ցույց են տալիս մեր անցած ճանապարհը եւ նաեւ մեր հավաքած քվեները: Սա է ճշմարտությունը: Ես այսօր չեմ ուզում տոկոսներ ասել, բայց մենք կունենանք բավականին ծանրակշիռ ներկայություն Ազգային ժողովում, ավելին, քան հիմա է»,- երեկ հրավիրած մամուլի ասուլիսում հայտարարեց «Օրինաց երկիր» կուսակցության նախագահ, ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանը:

Կարդացեք էջ 2:

### Իշխող կուսակցությունների ցուցանիշը բարձր է եղել

«Հասարակական քաղաքական հետազոտությունների կենտրոն»-ը 720 անձի շրջանում հարցումներ է անցկացրել՝ մասնակցելո՞ւ են ընտրություններին, թե՞ ոչ, կամ արդար կլինե՞ն արդյոք առաջիկա ընտրությունները: Հարցվողների շուրջ 45 տոկոսը պատասխանել է, որ չի պատրաստվում մասնակցել ընտրություններին, իսկ 34 տոկոսը համոզված է, որ դրանք արդար են լինելու: Replik.am-ի տեղեկացմամբ, ըստ հարցման արդյունքների, բարձր է եղել իշխող կուսակցությունների ցուցանիշը:

Կարդացեք նաեւ՝ էջ 2:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Քննարկում

Այսօր, ժամը 12-ին, «Ազդակ»-ի հյուրն է Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցության նախագահ Խոսրով Հարությունյանը:

### Եղանակ

Երեւան - 12 - 1, Շիրակ - 20 - 4, Կոտայք - 20 - 4, Գեղարքունիք - 20 - 4, Լոռի - 13 - 2, Տավուշ - 15 0, Արագածոտն լեռներ - 20 - 4, Արագածոտն նախալեռն. - 12 0, Արարատ - 12 0, Արմավիր - 12 0, Վայոց Ձոր լեռներ - 20 - 4, Վայոց Ձոր նախալեռն. - 12 + 1, Սյունիքի հովիտներ - 11 0, Սյունիքի նախալեռներ - 12 - 2, Արցախ - 10 0

## Հարցվածների 45 տոկոսը ընտրելու չի գնա

«Հասարակական քաղաքական հետազոտությունների կենտրոն»-ը երեկ ներկայացրեց հունվարի 20-ից փետրվարի 9-ը կատարված հարցումների արդյունքները: Ինչպես տեղեկացնում է replik.am-ը, ըստ կենտրոնի տնօրեն Զորիկ Մարտիկյանի ներկայացրած տվյալների՝ հարցմանը մասնակցել է 720 մարդ՝ 506 կին եւ 214 տղամարդ:

Հարցին, թե ընտրություններին մասնակցելո՞ւ են, թե՞ ոչ, հարցվողների շուրջ 45 տոկոսը պատասխանել է՝ «ոչ», իսկ հարցին, թե առաջիկայում կայանալիք ընտրությունները կլինե՞ն արդար, թե՞ ոչ, 34 տոկոսը պատասխանել է՝ «այո»: Այս փաստը հարցումը կատարողները կապում են նրա հետ, որ ժողովրդի մոտ մեծացել է հավատը ընտրությունների նկատմամբ: Այնուամենայնիվ, հարցվածների 45 տոկոսի համար ընտրությունները շարունակվում են մնալ ոչ կարեւոր իրադարձություն: Այդ հարցման արդյունքում իշխող կուսակցությունները հավաքել են բարձր ցուցանիշ: Ստորեւ ներկայացնում ենք ամբողջական ցանկը.

1. ՀՀԿ՝ 26 տոկոս
2. ԲՀԿ՝ 21 տոկոս
3. ՕԵԿ՝ 14 տոկոս
4. ՀԱԿ՝ 11 տոկոս
5. ՀՅԴ՝ 9 տոկոս
6. «Ժառանգություն»՝ 7 տոկոս
7. Այլ՝ 12 տոկոս

Լրագրողի հարցին՝ ինչո՞վ է պայմանավորված ՕԵԿ-ի հավաքած նման բարձր տոկոսային հարաբերակցությունը, կենտրոնի աշխատանքները համակարգող Կ. Վարդանյանը նշեց. «Գյուղատնտեսության եւ արտակարգ իրավիճակների նախարարների կատարած ակտիվ եւ արդյունավետ գործունեությամբ»: Իսկ ինչ վերաբերում է ԲՀԿ-ին, նա ավելացրեց, որ այդ ցուցանիշը կախված է այն հանգամանքից, թե արդյոք նա կլինի կոալիցիայի՞ մեջ, թե՞ կոալիցիայից դուրս:

ԿԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## «Ա1+»-ը կդիմի Մարդու իրավունքների եվրոպական դատարան

«Մելտեքս» ՍՊԸ-ն եթե մերժվի վճռաբեկ դատարանում, դիմելու է Մարդու իրավունքների եվրոպական դատարան,- տեղեկացնում է «Ա1+» ՀԸ նախագահ Մեսրոպ Մովսեսյանը: Նախորդ շաբաթ առաջին ատյանի դատարանը մերժել էր «Ա1+»-ի հերթական հայցը: 2002թ. ի վեր «Ա1+»-ը պայքարում է եթեր վերադառնալու համար:

«Անպայման դիմելու ենք Եվրադատարան, որովհետեւ ես կիսատ գործ չեմ սիրում, եւ երկրորդ՝ եթե կա մի վճիռ, որն ի կատար չի ածվել, պետք է վերջաբան ունենա. կամ պետությունը պետք է հայտարարի, որ չի կատարելու 2008թ.-ի՝ Եվրոպական դատարանի պահանջը, կամ էլ պետք է կատարի: Երրորդ տարբերակը, որն ընտրել էր ՀՌԱՀ նախագահ Գրիգոր Ամալյանը, հայտարարելով, թե «ցանկանում է եթերը զերծ պահել կեղծիքից», չի աշխատի»,- ասաց Մեսրոպ Մովսեսյանը: «Ա1+»-ի շահերի պաշտպանությունն իրականացնող փաստաբանական խմբի ղեկավար Տիգրան Տեր-Եսայանը համոզված է, որ Վճռաբեկ դատարանի որոշումը կլինի դիվանագիտական:

«Վճռաբեկ դատարանը կփորձի փիլիսոփայել, հղում կանեն անգամ եվրոպական նախադեպերին, կփորձեն իրենց մերժման որոշումը ձեւակերպել այնպես, որ ունենա ժողովրդավարական պետության դատական համակարգի որոշման տպավորություն, բայց միեւնույն է՝ կա մեկ խնդիր եւ մեկ հարց, որի պատասխանը մենք չենք ստացել՝ մրցութային վեց չափորոշիչներից ինչո՞ւ է գնահատվել միայն մեկը եւ, դրա պատասխանը կպացուցի՝ կայացել է մեր դատական համակարգը, թե ոչ»,- «Ա1+»-ի հետ զրույցում պարզաբանեց Տիգրան Տեր-Եսայանը:

# Սասուն Միքայելյանը հնարավոր է՝ բողոքարկի ընտրությունների արդյունքները

### Ըստ նրա շտաբի պետ Հակոբ Ավագումյանի՝ դա չի բացառվում

«Բացարձակ սուտ է եւ հերյուրանք: Ադիբեկյանն ինչպես որ միշտ է սուտ ասել, հիմա էլ է ստում»,- aravot.am-ին ասաց Սասուն Միքայելյանի շտաբի պետ Հակոբ Ավագումյանը՝ ի պատասխան սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյանի այն հայտարարության, որ Հրազդանի քաղաքապետի ընտրությունների ընթացքում երկու թեկնածուներն էլ բաժանել են ընտրակաշառք, եւ հենց այդ պատճառով Սասուն Միքայելյանը չի բողոքարկում ընտրությունների արդյունքները: «Գործող քաղաքապետը կոնտրփաստեր ունի նրա դեմ: Ամեն ինչ ձայնագրված ու տեսագրված է, թե ինչպես են լցնում, գնում եւ այլն: Այսինքն՝ երկու թեկնածուները իրար դեմ կոմպրոմատներ ունեն»,- մամուլի ասուլիսում հայտարարել էր Ադիբեկյանը: Նա նաեւ համոզված է, որ ընտրակաշառքը չէր կարող ազդել ընտրությունների ելքի վրա, քանի որ թեկնածուների ստացած ձայների տարբերությունը մեծ է՝ 10%. «Գնված ձայների տոկոսը չի գերազանցում 5-6%-ը, ինչը չի ազդում ընտրությունների ելքի վրա: Ոչ գործող քաղաքապետը, ոչ Սասուն Միքայելյանը այնքան գումար չունեն, որ կարողանային 23 հազար ձայների կեսը գնել»:

Մինչդեռ Սասուն Միքայելյանի շտաբի պետը կարծում է, որ հիմնական գործոնը եղել է հենց ընտրակաշառքը, ու հավելում. «Ընտրակաշառքը համատարած բաժանվել է Արամ Դանիելյանի կողմից, դա փաստ է, եւ ոչ ոք չի կարող դա ժխտել, Արամ Դանիելյանի մոտ էլ ոչ մի տեսաերիզ կամ ձայներիզ չի կարող լինել, որ մենք կաշառք ենք բաժանել»:




Հիշեցնենք, որ Հրազդանի քաղաքապետի ընտրություններում, ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախնական տվյալների, ավելի քան 1500 ձայնի առավելությամբ հաղթանակ է տարել գործող քաղաքապետ, Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ Արամ Դանիելյանը:

Անդրադառնալով Հակոբ Ավագումյանի մեղադրանքներին, թե «դրսից» 4000 մարդ է բերվել Հրազդանի գործող քաղաքապետի օգտին քվեարկելու համար, հաղթած Արամ Դանիելյանն էլ թերթերից մեկում ասել է. «Նման բան չէր կարող լինել, որովհետեւ ՀԱԿ-ի կառուն դեմքերը, Նիկոլ Փաշինյանից սկսած, մանրամասն ուսումնասիրում էին ե՛ւ ընտրողների ցուցակները, ե՛ւ անձը հաստատող փաստաթղթերը: Պատկերացրեք՝ ՀԱԿ-ի ներկայացուցիչներն ինչ աղմուկ կբարձրացնեին, եթե իրականում որեւէ տեղամասում որեւէ լուրջ խախտում արձանագրվեր: Երեւի հիասթափված են, որ տեղամասերում լցոնումների, բռնությունների դեպքեր չեն եղել, դրա համար էլ խոսում են «անտեսանելի» կեղծիքների մասին»:

Aravot.am-ի խնդրանքով անդրադառնալով այս տեսակետին՝ Հակոբ Ավագումյանն ասաց. «Հարցն այն է, որ դա այնքան կազմակերպված ձեւով են անում, որ դրա հայտնաբերելը շատ դժվար է: Եթե մարդը գալիս է ու անձնագրով քվեարկում, ոչ ոք չի կարող նրան բան ասել: Այդ դեպքերը շատ մանրակրկիտ կազմակերպված են, որ մենք չկարողանանք հայտնաբերել»:

Պարոն Ավագումյանից նաեւ հետաքրքրվեցինք՝ արդյոք ճի՞շտ էր ընտրությունների արդյունքները չբողոքարկելու մասին որոշումը, արդյոք դա շահարկումների առիթ չի՞ տալիս:

«Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը դեռեւս վերջնական որոշում չի կայացրել, վերջնական ամփոփումը լինի, վերջնական որոշում կայացվի՝ մենք եռօրյա ժամկետ կունենանք ամփոփելու համար: Բայց վերջնական որոշում կայացնողը թեկնածուն է, նա էլ կորոշի՝ բողոքարկել, թե ոչ»,- ասաց նա:

Որ ԸԸՀ-ի վերջնական որոշումը նախնական արդյունքներում որեւէ էական բան կփոխի՝ նաեւ պարոն Ավագումյանը չի սպասում, բայց հարցին՝ չի՞ բացառվում, որ Սասուն Միքայելյանը վերանայի իր որոշումը եւ բողոքարկի ընտրությունների արդյունքները, պատասխանեց. «Իհարկե՝ չի բացառվում»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Այո, ես վստահում եմ իմ կոալիցիոն գործընկերներին»

Երեկ հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ պատասխանելով «Երկիր-մեդիա»-ի հարցին՝ վստահո՞ւմ եք Ձեր կոալիցիոն գործընկերներին եւ համոզվա՞ծ եք, որ նրանք Ձեզ չեն «քցի», ինչպես գրում են որոշ վերլուծաբաններ, ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանն ասաց. «Այո, ես վստահում եմ իմ կոալիցիոն գործընկերներին, բայց գիտե՞ք ինչ կա, ամեն կուսակցություն ինքը պետք է իր պայքարով իր քվեները հավաքի, մենք մեր հույսը մեզ վրա ենք դնում, եւ, ընդհանրապես, ամբողջ մեր քաղաքական կենսագրության ընթացքում մենք մեր հույսը մեզ վրա ենք դրել, մենք պետք է աշխատենք, մեր գործընկերների հետ մենք ունենք շատ լավ հարաբերություններ, հանրապետության նախագահի հետ, որպես ՀՀԿ նախագահի, ունենք շատ լավ հարաբերություններ, երեք կոալիցիոն կուսակցությունների ղեկավարների վերջին հանդիպումները անցել են լիակատար փոխըմբռնման պայմաններում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել գերակա համարել երկրի շահը, այսինքն՝ կազմակերպել նորմալ ընտրություններ»: Արթուր Բաղդասարյանը՝ ասելով, թե շատ է խոսվում «Մարտի 1-ի» մասին, հարկ համարեց մեկ արձանագրում ներկայացնել. «Ժողովրդի եւ ամբոխի միջեւ կա մի մեծ տարբերություն. ժողովուրդը ունի առաջնորդ, ամբոխը չունի առաջնորդ, տեսեք, թե ինչ տեղի ունեցավ Եգիպտոսում: Այն, ինչ տեղի ունեցավ մարտի 1-ին, ո՞վ էր այդ ժողովրդին տեր կանգնել, էդ մի քանի հազար հոգին մնացել էր Նիկոլ Փաշինյանի հույսի՞ն, բայց չէ՞ որ Նիկոլ Փաշինյանը չէր էդ շարժման առաջնորդը, նա ակտիվ աջակիցն էր այդ շարժման:

Չի եղել, որ ես միտինգներ անեմ օպերայի մոտ կամ Մատենադարանում ու միտինգի չգնամ, չի լինում նման բան: Կարող է գնալ իմ կուսակցությունից ցանկացածը, բայց նա երբեք իմ փոխարեն չի կարող իմ հրավիրած ժողովրդին տեր կանգնել: Սա էլ եմ ես ուզում արձանագրել: Մեզ վրա շատ քարեր նետեցին էս չորս տարում, շատ քարեր, եւ հիմա եկել է այդ քարերը հավաքելու եւ, անհրաժեշտության դեպքում, անհրաժեշտ ուղղությամբ նետելու ժամանակը: Ոչ մի անգամ դուք ՕԵԿ-ից չեք կարող տեսնել, որ մենք ուրիշին փնովելով փորձել ենք միավորներ վաստակել. նման բան մենք չենք արել»: Լրագրողները հետաքրքրվեցին՝ արդյոք Արթուր Բաղդասարյանը վստա՞հ է, որ իր կուսակցությունը այս անգամ եւս բավարար քվեներ կստանա եւ կհայտնվի խորհրդարանում: «Օրինաց երկիր» կուսակցության նախագահը համոզված էր. «Այո, մենք վստահ ենք, եւ դրանում դուք կհամոզվեք ընդամենը երկու ամիս անց: Իմ, իմ թիմի հասցեին ի՞նչ մեղադրանք է հնչել՝ ինչո՞ւ Արթուր Բաղդասարյանը չմիացավ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Պատասխան՝ իսկ ինչո՞ւ պետք է միանայի Լեւոն Տեր-Պետրոսյանին, մի գործչի, որը նախագահական ընտրությունների քարոզարշավից առաջ եւ ընթացքում անվանարկում էր ինձ եւ իմ թիմին՝ ընդհուպ ինձ անվանելով ազգի դավաճան: Ես Ձեզ հիմա անվանեմ ազգի դավաճան՝ դուք ինձ հետ կգա՞ք համագործակցելու»:

Մ. Ե,

## ՀԱԿ-ի Արաբկիրի շտաբը փակել են



Երեկ ՀԱԿ-ը հայտարարություն է տարածել, որով դատապարտում է իշխանությունների կեցվածքը եւ հետապնդումը՝ ՀԱԿ անդամ «Ժողովրդավարական Հայրենիք» կուսակցության նկատմամբ:

Վերաքննիչ դատարանը վճիռ է կայացրել եւ մինչեւ մարտի 1-ը ՀԱԿ-ի գրասենյակը եւ Պետրոս Մակեյանի «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցությունը պետք է ազատեն Արաբկիր համայնքում՝ Վաղարշյան 12 հասցեում գտնվող տարածքը: Այն կուսակցության կենտրոնական գրասենյակն էր, նաեւ Կոնգրեսի Արաբկիրի կենտրոնական շտաբը: Հայտարարության մեջ ՀԱԿ-ը պահանջում է իշխանություններից անհապաղ դադարեցնել հետապնդումները «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության եւ Կոնգրեսի տարածքային կառույցի նկատմամբ: Հայտարարության տակ ստորագրել են 8 կուսակցությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ «Ազատություն» կուսակցությունը, «Այլընտրանք» հ/կ-ն, «Ժողովրդի իշխանություն» նախաձեռնությունը, «Հանրապետություն» կուսակցությունը եւ այլն:

Հ. ՋԵԲԵՋՅԱՆ

a r a v o t d a i l y
ՀԻՆԳՇԱԲԹԻ 16.02.2012

# Մեծամասնական, թե համամասնական՝ սա չէ խնդիրը

## Արտախորհրդարանական ընդդիմությունը եկել էր խորհրդարան եւ իշխող կոալիցիայի հետ մասնակցում էր ընտրական համակարգերին վերաբերող լսումներին:



Խորհրդարանական լսումները՝ «Համամասնական, թե մեծամասնական ընտրակարգ» թեմայով, երեկ ի վերջո կայացան: Հիշեցնենք, որ լսումների նախաձեռնողը խորհրդարանական եւ արտախորհրդարանական ընդդիմություններն էին, եւ այդ նախաձեռնությանը միացել էր նաեւ ԲՀԿ-ն: Լսումների ընթացքում չեղան ցնցող բացահայտումներ, արմատական եւ արմատախիլ ելույթներ, ամեն ինչ ընթացավ հանդարտ եւ համաչափ, եւ բոլոր ելույթ ունեցողները՝ ընդդիմադիր, թե իշխանական, մնացին հավասարակշիռ վիճակում: Նախ՝ մեկ դիտարկում, որը քննարկումների հետ զուտ զգացական կապ ունի: Արտախորհրդարանական ուժերի ներկայացուցիչները խորհրդարանի միջանցքներում եւ դահլիճում իրենց որոշ չափով կաշկանդված էին զգում եւ առաջին բանը, որ անում էին, իրենց հետ եկած գործընկերների հետ ԱԺ նորացված դահլիճի տեսքն էին քննարկում:

ՀԱԿ ներկայացուցիչ Լեւոն Զուրաբյանն իր ելույթում հայտարարեց, որ «իշխանության ոչ լեգիտիմության ճգնաժամը հաղթահարել եւ ավազակապետությունից ազատվել հնարավոր է միայն օրինական ընտրությունների միջոցով»: Մեծամասնական ընտրակարգը «չարիք» որակելով՝ ՀԱԿ համակարգողն ասաց. «Իշխանությունները հովանավորում են տեղի հեղինակություններին, վարչական ռեսուրսով եւ ընտրական հանձնաժողովներում կատարվող կեղծարարությամբ օգնում են ընտրվել մեծամասնական ընտրատարածքում, իսկ տեղական հեղինակությունը դրա դիմաց ներդնում է ֆինանսական, ուժային եւ կրիմինալ ռեսուրսներ՝ ընտրողներին կաշառելու եւ ահաբեկելու նպատակով: Մեծամասնական ընտրակարգի վերացումը կջախջախի ընտրական կոռուպցիայի այս առանցքային օղակը»:

ՀՅԴ խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանը հայտարարեց, թե անգամ հիմա՝ ընտրություններից երկու ամիս առաջ, ուշ չէ փոփոխել «Ընտրական օրենսգիրքը»: Ասաց նաեւ, թե շատ մեծամասնականով ընտրված պատգամավորներ չեն լինում իրենց ընտրատարածքներում. «Ես, իհարկե, հասկանում եմ, որ մեծամասնականով ընտրված մարդը միշտ այնքան փող ունի, որ Երեւանում մեկ կամ երկու բնակարան կամ առանձնատուն կունենա, բայց մարդիկ կան, որ ընդհանրապես իրենց ընտրատարածքներում չեն երեւացել: Այդ տեղամասերում չգիտեն՝ իրենց պատգամավորն ով է, որովհետեւ ինքը ոչ միայն այնտեղի բնակիչ չէ, ինքն այնտեղ չի էլ երեւացել: Լավ է, որ այստեղ չեն մոտենում ամբիոնին, ծղտուն չեն հանում, լավ էլ անում են, պատկերացնում եք՝ խոսեին էլ, բայց այլ խնդիր կա, գոնե այդ փաստարկները մի՛ բերեք»:

ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, ԵԽԽՎ-ում հայաստանյան պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանը մանրամասն բացատրեց, որ գոյություն չունի ընտրակարգի լավագույն մոդել, հետեւաբար, պետք է պարզապես ընտրել կոնկրետ երկրի համար ավելի կիրառելին: Պարոն Հարությունյանը ասաց նաեւ, թե քաղաքական մեծամասնությունը հավանություն չի տալիս խորհրդարանական ընդդիմության ներկայացրած նախագծին ոչ միայն այն պատճառով, որ ընտրություններից 2 ամիս առաջ խաղի կանոնները չեն փոխում, այլեւ, որ մերի պես երկրի համար այս պահին հարյուր տոկոսանոց համամասնական ընտրակարգին անցնելը ճիշտ չի լինի: Նաեւ կետ առ կետ հակափաստարկներ ներկայացրեց ընդդիմության նախագծին: Մասնավորապես շեշտելով, որ հաճախ համամասնական ցուցակների առաջնային տեղերում գրված հայտնի մարդկանց անունները շոգեքարշի դեր են կատարում, եւ հետո այդ հայտնի անունները չեն էլ հայտնվում խորհրդարանում: Դավիթ Հարությունյանն ավելացրեց, որ անցումը 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին կխթանի կուսակցական դիկտատուրան ու կջախջախի մեզանում կուսակցությունների կայացման գործընթացը:

«Ժառանգության» փոխնախագահ Ռուբեն Հակոբյանը հայտարարեց, որ թեպետ իշխանություններն ասում են, թե պատրաստվում են ազատ-արդար ընտրություններ անցկացնել, սակայն դրան ուղղված քայլերը չեն երեւում. «Այս պահին մենք տեսնում ենք, որ բարոյական ու քաղաքական կամք այս ուղղությամբ չի ցուցաբերվում: Ընտրական օրենսգրքի փոփոխությունների ժամանակ երկու տարի շարունակ այլընտրանքային օրենսգիրք առաջարկեցինք, սակայն դրա վրա աչք փակեցին: Աչք է փակվում նաեւ մեծամասնականի կեղծիքների վրա»:

ԲՀԿ ներկայացուցիչ Նաիրա Զոհրաբյանը հայտարարեց, որ կայացած ժողովրդավարական, ընտրական ավանդույթ ունեցող որեւէ երկրում երբեք չէր կարող նման հարց առաջանալ՝ համամասնական, թե մեծամասնական ընտրակարգ, որովհետեւ այդ կարգի երկրներում կա մեկ խնդիր՝ անցկացնել արդար ընտրություններ, իսկ թե ինչ համակարգով դա կանցկացվի՝ էական չի կարող լինել: Տիկին Զոհրաբյանը նշեց, որ իր նախընտրական ծրագրում դեռ 2007-ին ԲՀԿ-ն արձանագրել էր հարյուր տոկոսանոց համամասնականի անցումը, եւ պատասխանեց նաեւ այն շահարկումներին, թե ինչու ԲՀԿ-ն «Ընտրական օրենսգրքում» լրամշակումների ժամանակ չպաշտպանեց այդ տեսակետը. «Կոալիցիա նշանակում է կոնսենսուս, եւ ես չէ, որ ձեզ պիտի բացատրեմ, թե դա ինչ է նշանակում, եւ քանի որ այժմ հարցը լայն հնչեղություն է ստացել, բնականաբար, ԲՀԿ-ն միացավ լսումների կազմակերպման նախաձեռնությանը»: Պատգամավորը նաեւ շեշտեց, որ տարիներ շարունակ այս հարցը դառնում է բուռն քննարկումների առարկա. «Մոտ երկու տարի առաջ մենք համապատասխան օրենքում փոփոխություն արեցինք, որը հնարավորություն է տալիս անցկացնել խորհրդատվական հանրաքվեներ, եւ քանի որ կա հասարակության մեջ նման վեճ, ճիշտ կլինի քաղաքական ուժերի միջեւ գալ կոնսենսուսի եւ անցկացնել խորհրդատվական հանրաքվե»:

«Ազատ դեմոկրատներ» կուսակցության վարչության անդամ Գառնիկ Գեւորգյանը հայտարարեց, որ լսումներում հնչած բոլոր կարծիքները ցույց տվեցին մեկ բան. «Գրեթե բոլոր քաղաքական ուժերը համակարծիք են մեկ հարցում, որ քաղաքական համակարգի առողջացման հիմնական նախադրյալը իսկապես համամասնական ընտրակարգին անցումն էլ»:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ

## ՀԱԿ-ի «պիկն» անընդհատ փոփոխվո՞ւմ է

ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանն իր վերջին ասուլիսում հայտարարել էր, որ փետրվարին ժողովրդին ոտքի են հանելու: Երբ լրագրողները հետաքրքրվեցին, թե ինչո՞ւ հենց փետրվարին, պարոն Զուրաբյանը բացատրեց, որ դա օդից չեն որոշել, լուրջ հաշվարկներ են արել ու պարզել, որ Հայաստանի բնակչությունն առավել ակտիվ է հենց փետրվարին, որովհետեւ Նոր տարվա համար խողանչիները գալիս են, մի քիչ մնում են ու այդ ժամանակ դեռ գնացած չեն լինում, մինչ այդ մարդիկ խառն են ամանորյա եռուզեռով, մի խոսքով՝ ամենապատեհ ժամանակը հանրահավաքի հենց փետրվարն է: Սակայն, ինչպես հայտնի է, հանրահավաքը հետաձգվել է: Այս անգամ հայտարարվում է մարտի 1-ը: Երեկ այդ առնչությամբ ՀՀՇ կուսակցության նախագահ Արամ Մանուկյանը վստահեցրեց, որ միտինգի օրը փոխելու պատճառը միայն ցուրտն է. «Ես մինչեւ հիմա մրսած եմ: Հրազդանում բոլորս այնպես մրսեցինք, բոլորը մինչեւ հիմա հիվանդ են: Ես հիմա տաքությունով եմ եկել: Մենք սառանք իսկական առումով: Առավոտյան երբ գնացի տեղամաս՝ -26 էր, ես էլ, տղաս էլ, Դավիթը Շահնազարյան, Արմանը, բոլորը հիվանդ են: Որեւէ բան չի փոխվել, որեւէ մոտիվացիա չի արվել, 10 օր հետաձգելը, հավատացեք, մեզ համար կորուստ չի»:

Երբ հիշեցրինք պարոն Մանուկյանին Լեւոն Զուրաբյանի հաշվարկները՝ նա պատասխանեց. «Կա եւ գնացողների հոսք, որից պակասելու են, բայց ես ձեզ հավատացնում եմ, որ կա մի հատ լուրջ լցնող աղբյուր՝ դա սոցիալական լարվածությունն է՝ գների աճը: Լուրջ հետազոտություններ են արված եւ դրսից, եւ ներսից, եւ միջազգային կառույցներից՝ Հայաստանի քաղաքացու համար մեծամասամբ թոփ թեմաներ են աղքատությունը, գների բարձրացումը, աշխատատեղերի բացակայությունը եւ արտագաղթը: Միայն այս ընթացքում 20% գների աճ տեղի ունեցավ: Այսինքն՝ գարունն այն սեզոնն է, երբ ավելի շատ այդ ազդեցությունը զգացվում է քաղաքացու վրա, աշխատավարձի քչությունը, ապրանքների թանկությունը, լույսի-մույսի, գազի վարձից հետո թշվառ վիճակը: Այդ վիճակում ժողովրդի զայրույթը պիկի է հասնում՝ եւ այդ սոցիալական լարվածությունը մարդուն բերելու է հրապարակ»:

Մեր դիտարկմանը՝ որ Լեւոն Զուրաբյանն էլ ախր ասում էր, որ «պիկի է հասնում փետրվարին», ձեր «պիկն» անընդհատ փոխվո՞ւմ է՝ պարոն Մանուկյանը պատասխանեց. «Բա ես էլ եմ դա ասում, ցավդ տանեմ, հիմա 5 օրվա բա՞նն եք ասում: Փետրվար-մարտը պիկ է սոցիալական լարվածության եւ մարդկանց ակտիվացման համար»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

14.02.2012թ. ք. Երեւան

## Հուշագիր

Մենք՝ ներքոստորագրյալ հասարակական-քաղաքական կազմակերպությունների ղեկավարներս, «Ժողովրդավարություն եւ Աշխատանք» կուսակցության (ԺԱԿ) նախաձեռնությամբ հրավիրված համատեղ քննարկումների ընթացքում վերլուծելով Հայաստանում առկա ներքաղաքական վիճակը, նաեւ ելնելով 2012թ. ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրություններին ընդառաջ՝ երկրում ձեւավորված նախընտրական իրողություններից եւ երկրի կանխատեսելի ապագայի երաշխավորման խնդրում այդ ընտրությունների ունեցած հույժ կարեւորությունից՝ ստորագրում ենք սույն Հուշագիրը եւ անվերապահորեն որոշում.

* առաջնորդվելով համատեղ քննարկումների ընթացքում ձեռք բերված վերջնական փոխհամաձայնությամբ, նաեւ գործնականորեն կարեւորելով կառուցողական համագործակցության եւ միասնականության հարցերում մեր միջեւ առկա սկզբունքային փոխըմբռնումը՝ 2012թ. ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրությունների ողջ ընթացքում հանդես գալ միասնաբար՝ մեկ ճակատով,
* երաշխավորել Հուշագիրը ստորագրած կազմակերպությունների ակտիվ, համակողմանի մասնակցությունն ու ներգրավվածությունը նախընտրական գործընթացներում,
* 2012թ. ՀՀ Ազգային ժողովի հերթական ընտրություններում մեր մասնակցության ձեւաչափի, մեզ համար նախընտրելի քաղաքական ուժի (կուսակցություն, դաշինք) ընտրության, նաեւ վերջինիս սատարման վերաբերյալ համապատասխան որոշում կայացնել մոտակա համատեղ համաժողովի ժամանակ,
* ընթացիկ աշխատանքները եւ կազմակերպական բնույթի ծրագրերը համակարգելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ,
* աշխատանքային խմբի գործունեությունը համակարգողի պարտականությունները վերապահել «Ժողովրդավարություն եւ Աշխատանք» կուսակցության նախագահ Սպարտակ Մելիքյանին:

«Ժողովրդավարություն եւ Աշխատանք» կուսակցության նախագահ Սպարտակ Մելիքյան

«Գարդմանա երկիր» հ/կ նախագահ Ալեքսանդր Տերյան

«Համայնք եւ Իրավունք» հ/կ նախագահ Սամվել Մկրտչյան

«Հանուն փախստականների ապագայի» հ/կ նախագահ Մարգար Սահակյան

«Ղարաբաղ» հ/կ նախագահ Սիրվարդ Գալստյան

«Զանգեզուր» հ/կ նախագահ Արամ Մելքումով

«Ռոմըն Վիրջինս» հ/կ գործադիր տնօրեն Դոնարա Աբրահամյան

«Ագրարիի» փախստականների-ֆերմերների բարեգործական հ/կ նախագահ Ն. Ղուկասյան

«Երջանիկ» մանկական բարեգործական հ/կ նախագահ Իննա Ակոպովա

«Պոտենցիալ» մտավորական-փախստականների հ/կ նախագահ Կ. Ասատուրյան

Հայ փախստականների «Ահազանգ» հ/կ նախագահ Գ. Օգանեզով

«Քարավան-88» հ/կ նախագահ Ջ. Զուլհակյան

«Կեչառիս» հ/կ նախագահ Աբգար Գյուլումյան

«Արարատի կանչ» ՀԲԿ նախագահ Հրաչ Բաղդասարյան

«Անհայտ կորած ազատամարտիկների հարազատների խորհուրդ» հ/կ նախագահ Ռիմա Առաքելյան

«Որակյալ կրթություն» հ/կ նախագահ Ռիտա Գյուլամբարյան

R

# «Արաքս» թռչնաֆաբրիկայում լայնածավալ ստուգումներ են իրականացվում

## «Առավոտին» տված հարցազրույցում տեղեկացրեց ՍՆՆդի անվտանգության պետական ծառայության պետ Աբրահամ Բախշագույլյանը:

«Առավոտը» բազմիցս անդրադարձել է հայաստանյան մի քանի թռչնարտադրող ընկերությունների ահազանգին, որով թռչնաբույծներն իրենց անհանգստությունն ու մտահոգությունն են հայտնում ոլորտում ստեղծված որոշ բացասական երեւույթների վերաբերյալ, մասնավորապես՝ որ Հայաստան ներմուծվող սառեցրած հավերը վերափաթեթավորվում եւ վաճառվում են տեղական՝ թարմ կամ սառեցրած հավի անվան տակ: Թեմայի հետ կապված «Առավոտի» հարցերին պատասխանում է ՍՆՆդի անվտանգության ծառայության պետ Աբրահամ Բախշագույլյանը:

- Պարոն Բախշագույլյան, հայաստանյան թռչնարտադրող որոշ ընկերությունների ղեկավարներ հավաստիացնում են, որ ոլորտում վերջին շրջանում արձանագրված որոշ բացասական երեւույթների մասին տեղեկացրել են նաեւ Ձեզ: Ի՞նչ քայլեր է իրականացրել Ձեր ղեկավարած ծառայությունը՝ իրողությունը բացահայտելու ուղղությամբ եւ ի՞նչ փուլում են դրանք:

- Թռչնաբույծների ահազանգի հետ կապված հանդիպել ենք նրանց, առարկայորեն քննարկել առկա իրավիճակը: Ծառայության կողմից ստեղծվել է աշխատանքային խումբ: Հանդիպումներ ենք ունեցել նաեւ թռչնի միս ներկրող բոլոր տնտեսվարող սուբյեկտների հետ, նրանց առաջադրանք է տրվել՝ իրենց կողմից ներմուծված հավի մսի իրացման հետագծելիությունն ապացուցող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ: Խնդիրը դեռ ուսումնասիրության եւ վերլուծությունների փուլում է: Այս տարի առավել ուշադրություն ենք դարձնելու թռչնի միս արտադրող, ներմուծող եւ իրացնող կազմակերպությունների գործունեության վրա, այդ իսկ պատճառով արդեն սկսել ենք ստուգումներ իրականացնել նաեւ թռչնաբուծարաններում: «Արաքս» թռչնաֆաբրիկայում իրականացվում են լայնամասշտաբ ստուգումներ: Ստուգվում են ոչ միայն թռչունների պահվելու եղանակները, վակցինացիային, մորթին եւ դրանց ներկայացվող պահանջների կատարման համապատասխանությունը, այլ նաեւ իրացման հետագծելիությունը: Խնդիրը մեկ օրում լուծելու խնդիր չէ, այն պետք է հասկանալ եւ կարողանալ տնտեսվարողների հետ մշակել այն խաղի կանոնները, որով բացասական իրողությունները իսպառ կվերացվեն: Թռչնամսի հետ կապված խնդիրը լուծելի է արտադրման եւ իրացման հետագծելիության կարգի պահպանմամբ: Ձվի հետ կապված գործողությունները եւ թյուրիմացությունները կանխելն առավել հեշտ է, քանի որ ձուն մեր հանրապետություն ներմուծվում է մեր հսկողության ներքո, եւ մակնշման պահանջի կատարումը առավել հեշտ է իրականացնել եւ վերահսկել: Ինչ վերաբերում է հավին, ապա թռչնամսի նույնականացումը՝ սառեցրածը թարմի անվան տակ վաճառելը, այդքան էլ դյուրին խնդիր չէ: Եվ դա կարող է պարզվել միայն վերլուծության լաբորատոր լայնածավալ հետազոտության արդյունքում: Մեր կողմից, թռչնաբույծների հետ միասին, ուսումնասիրվել են նաեւ խանութներում առկա բոլոր հավերի տեսականիները, նաեւ թռչնաբույծները փաստեցին, որ դժվար է սառեցված հավը վաճառել թարմի անվան տակ, քանի որ սառեցված հավը իր ապրանքային տեսքը եւ որոշ հատկանիշներ կորցնում է եւ սպառողի համար դա նկատելի է: Խնդիրն ավելի շատ ներկրված՝ սառեցրած եւ տեղական սառեցրած հավերի նույնացման մասին է: Փորձելու ենք այդ խնդիրը լիովին լուծել:

- Իսկ այն, որ ներկրված՝ սառեցրած հավերը հատուկ սարքավորումներով եւ բաղադրություններով վերամշակվում են՝ թարմի «նմանեցնելու համար», չի՞ կարող սպառողին թյուրիմացության մեջ գցել:

- Այդ սարքավորումներով թարմացումները եւս շատ թանկ հաճույք է եւ կազդի հավի ինքնարժեքի վրա: Դա ապացուցելի չէ: Ապացուցելի չէ նրա տեսականին:



- Ձեր լաբորատոր հետազոտությունների արդյունքում հնարավո՞ր է պարզել հավի բաղադրությունը, այսինքն՝ թե նրա մեջ գլիցիրինի պարունակությունը, ստաբիլիզատորները, հակաօքսիդանտները, էմուլգատորը, ցիտրինը եւ այլն:

- Հայաստանում ստուգումների կազմակերպման համար լաբորատոր հետազոտությունները իրականացվում են մրցութային եղանակով՝ պետական ծրագրի շրջանակներում: Մրցույթը հայտարարված է: Տվյալ ստուգմանը վերաբերող լաբորատոր փորձաքննությունները այս պահին իրականացնում է ՍՆՆդամթերքի անվտանգության ծառայության ներքո գործող անասնաբուժական եւ բուսասանիտարական լաբորատորիան: Սակայն մեր հանրապետությունում դեռեւս չկա մի լաբորատորիա, որը ամբողջ սպեկտրով փակի բոլոր փորձաքննությունները: Այդ պատճառով մեր ծառայությունը հայտարարել է մրցույթ, թե որ լաբորատորիայի կարողությունները թույլ կտան իրականացնել այդ փորձաքննությունները: Տվյալ մրցույթը շարունակական է լինելու: Խնդիրը լուծելի կլինի այն ժամանակ, երբ Հայաստանը ունենա լաբորատորիաների ցանց, որով կարողանանք ամբողջ սպեկտրով իրականացնել փորձաքննություններ: Իսկ այսօր իրականացվում են հետազոտություններ այն չափով, որքանով որ մեր լաբորատոր հնարավորությունները ներում են:

- Ե՞րբ եք սկսել զբաղվել խնդրով եւ, ի վերջո, ե՞րբ հայտնի կլինեն ուսումնասիրությունների արդյունքները:

- Ուսումնասիրությունը սկսել ենք, կարծում եմ, փետրվարի 2-ին եւ մինչեւ ամսի 20-ը դրանք կավարտվեն: Մենք ամենօրյա ստուգումների եւ ուսումնասիրությունների մեջ ենք, աշխատանքի ծավալները մեծ են, մեր տեսուչների թիվը բավարար է դրանց համար: Վերջում կկազմվի ստուգման, մեր կողմից արձանագրված խախտումների, եւ այլ լաբորատոր ստուգումների արձանագրություն, որը կտրվի տնտեսվարող սուբյեկտին, կազմակերպվելու է վարչական վարույթի քննարկում, եւ այդ ամենի մասին կտեղեկացվի հանրությանը:

- Հնարավո՞ր է, որ տնտեսվարող սուբյեկտը մինչեւ ստուգումները թաքցներ այն սարքավորումները, որոնցով հավերին «վերակենդանացնում են», կամ կեղծված ու ապօրինի ապրանքը: Այսինքն՝ թաքցնեն իրավախախտումների իրեղեն ապացույցները:

- Խնդիրը պահի ստուգումը չէ: Ստուգման արդյունքում նման իրավախախտում հայտնաբերելը դեռ չի նշանակում, որ այդ խախտումը էլ չի կրկնվի: Դրա համար խնդիրը պետք է համակարգային լուծում ստանա, որպեսզի նման իրավախախտում անելը լինի անհնար: Այս ստուգման ժամանակահատվածի ստուգումը հնարավորություն չի տալիս կոծկելու իրավախախտումները: Ես կասեի՝ ստուգումը որքան կարճ ժամկետում իրականացվեց, այնքան կասկածելի է այդ ստուգման պրոֆեսիոնալությունը: Խնդիրը գլոբալ եւ համակարգային ստուգումն է, եւ ոչ թե պահի: Մենք ստուգում ենք անցած տարվա հուլիսի մեկից թռչնաֆաբրիկայի բոլոր գործողությունները:

- Այս աշխատանքներն իրականացնելու ժամանակ հանդիպո՞ւմ եք խոչընդոտների:

- Աշխատողի համար խոչընդոտները չեն կարող էական լինել, թե աշխատանք կատարելու ցանկություն կա: Մենք նման ստուգումներ, կապված ներմուծվող հավի մսի հետ, պարբերաբար ենք իրականացնում՝ կառավարության կողմից սահմանված որոշման հիման վրա: Հստակ ամրագրված են այն դեպքերը, երբ տվյալ ապրանքը ներմուծելիս իրականացվում է ոչ միայն փաստաթղթային, այլեւ լաբորատոր փորձաքննություն:

- Եղե՞լ են դեպքեր, որ ներկրվող թռչնամիսը չի համապատասխանել սննդի անվտանգության չափանիշներին:

- Թշնի մսի հետ կապված՝ չի եղել:

- Իսկ այն տարածված կարծիքը, որ Հայաստան են ներկրվում անհայտ արտադրության, անհայտ որակի եւ ժամկետի հավ եւ ձու, ինչպե՞ս կմեկնաբանեք:

- Ձվի հետ կապված դա բացառվում է, քանի որ ցանկացած ձու, որ ներկրվում է Հայաստան, ենթարկվում է փորձաքննության, եւ ծառայության աշխատակիցները հետեւողական են ձվի մակնշման պահանջների կատարման հարցում:

Հավի մսի հետ կապված՝ ներկրվող հավի փաթեթավորման վրա պարտադիր առկա է մակնշում, թե որտեղ եւ երբ է արտադրվել, ինչ է պարունակում եւ այլն: Նման մակնշում չլինելու դեպքում տվյալ ապրանքը ենթարկվում է լաբորատոր փորձաքննության, որից հետո միայն կարող է ներկրվել կամ՝ ոչ:

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

Հ. Գ. Հաջորդ համարում կարդացեք Տնտեսական մրցակցության պետական հանձնաժողովի նախագահի Արտակ Շաբոյանի հարցազրույցը՝ «Առավոտի» հետ:

### Ինչո՞ւ տուգանեցին մարզպետի երթուղու վարորդին

Անցած կիրակի՝ փետրվարի 12-ին, կուսակցական այցով Լոռու մարզ էր այցելել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը: Լոռու մարզի նեղ ճանապարհներին հանրապետականների երկար շարքերով ավտոբուսին եւ նրանց մեքենաներին ուղեկցել է պետավտոտեսչության մեքենան, որի միջից բարձրախոսով հնչել է ճանապարհը զիջելու հրահանգ՝ «աջ քաշել, կանգնել»: Մեր տեղեկություններով, այդ հրահանգին չի ենթարկվել Ալավերդի-Վանաձոր երթուղու «Ֆորդ» միկրոավտոբուսի վարորդ Կամո Դանիելյանը: Նա մեքենայի ընթացքը չի կանգնեցրել, ինչի համար պետավտոտեսուչի կողմից տուգանվել է: Մեզ հետ հեռախոսազրույցում Կամո Դանիելյանը հաստատեց, որ այդ երթուղում է աշխատում, երթուղին էլ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանինն է պատկանում: Հայտնեց, որ այդ օրն ինքն աշխատել է Ալավերդի-Վանաձոր երթուղում:

Նաեւ հաստատեց, որ այդ օրը պետավտոտեսուչներն իրեն տուգանել են 3 հազար դրամի չափով: Սակայն ասաց, որ տուգանքը վարչապետի այցի հետ կապ չունի, պարզապես Ալավերդու շուկայի մոտ շրջադարձի ժամանակ իր մեքենայի թարթիչները միացրած չեն եղել, որ իր «Ֆորդը» վարչապետի ավտոշարասյան անցնելու ժամանակ կանգնած է եղել: Մեր զրույցի ժամանակ Կ. Դանիելյանը մի քանի անգամ հարցրեց, թե ինչո՞ւ եմ դրանով հետաքրքրվում:

Ճանապարհային երթեւեկության կանոններով տուգանք չի նախատեսվում «կուսակցական երթով» շարժվող վարչապետի շարասյանը ճանապարհը չզիջելու համար: Հետաքրքիր է՝ պետավտոտեսուչները ծագումով ալավերդցի, Լոռու մարզպետի հայրենի քաղաքում, նրան պատկանող երթուղու վարորդին մեքենայի թարթիչները չմիացնելու համար սովորաբար տուգանո՞ւմ են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# Ջրամատակարարման շարունակականությունը Երեւանում հասել է 96,1տոկոսի

## «Երեւան Ջուր» ՓԲԸ գործունեության արդյունքները. 2012թ. հունվարը՝ 2011թ. հունվարի նկատմամբ

Ինչպես երեւում է ստորեւ բերվող աղյուսակից, տարեցտարի բարելավվում է «Երեւան Ջուր» ՓԲԸ գործունեության ցուցանիշները: Առաջընթացն ակնհայտ է ոչ միայն բազային՝ 2007թ. արդյունքների նկատմամբ, այլեւ ընթացիկ 2012թ.-ի հունվարը նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի հետ համեմատելիս: Մասնավորապես, ջրամատակարարման շարունականությունը Երեւանում, որը կարեւորագույն ցուցանիշներից մեկն է, կազմել է 96,1%: Մինչդեռ Վարձակալության պայմանագրով նախատեսված 95%-ին ընկերությունը պետք է հասներ միայն 2016թ.:

Այս աննախադեպ ցուցանիշն արդյունք է մի կողմից՝ ներքաղաքային բաշխիչ ցանցի վերակառուցման ու ջրամատակարարման համակարգի կառավարելիության աստիճանի բարձրացման, մյուսից՝ ջրի արդյունավետ օգտագործման, կորուստների նվազեցման եւ ապօրինությունների դեմ պայքարի: Դրա շնորհիվ անցած տարիների համեմատ մոտ 37 մլն մ3-ով նվազել է ջրառն աղբյուրներից, ինչպես նաեւ 26%-ով կրճատվել էլեկտրաէներգիայի ծախսը: Ահա թե ինչու, չնայած 2011թ. մատուցվող ծառայությունների սակագների նվազեցմանը, ընկերությունը ոչ միայն հաջողությամբ շարունակում է կատարել ստանձնած պարտավորությունները, այդ թվում ներդրումային, այլեւ նախորդ տարվա արդյունքներով դարձել է հանրապետության թվով 39-րդ խոշոր հարկատուն՝ վճարված հարկերի ավելի քան 1,9 մլրդ դրամ ծավալով: Դրանից բացի, ՀՀ պետբյուջե է փոխանցվել մոտ 476 մլն դրամ, որպես վարձակալության վճար:

| Հիմնական ցուցանիշներ | 2007թ. հունվար | 2011թ. հունվար | 2012թ. հունվար | 2012թ.-ը 2011թ.-ի համեմատ /+ - / |
|---|---|---|---|---|
| Աղբյուրներից վերցված ջրաքանակ՝ լիտր/վայրկյան | 11,940 | 10,285 | 9,539 | -746 կամ-7,25% |
| Ջրամատակարարման շարունակականություն | 75,9% | 91,5% | 96,1% | + 5% |
| Էլեկտրաէներգիայի սպառում՝ կՎտժամ/օր | 377,000 | 198,000 | 107,000 | -91,000 կամ -54% |

«Երեւան Ջուր» ՓԲԸ
հաղորդակցության բաժին

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 16.02.2012

# Պահանջում են արդարացնել

## Բռնաբարության փորձ կատարելու մեջ մեղադրվող Թադեւոս Գեւորգյանի դատաքննությունն ավարտման փուլում է

Համագյուղացու նկատմամբ բռնաբարության փորձ կատարելու եւ ճանապարհային ու տրանսպորտային երթեւեկության շահագործման կանոնները խախտելու մեջ մեղադրվող Թադեւոս Գեւորգյանի դատաքննությունը ավարտման փուլում է:

Շիրակի մարզի դատախազության ավագ դատախազ Ռ. Սարուխանյանը դատարանին միջնորդեց մեղավոր ճանաչել 27-ամյա երիտասարդին երկու հոդվածներով էլ եւ կիրառելով համաներման ակտը՝ նրան ազատել պատժի կրումից:

Թադեւոս Գեւորգյանի փաստաբան Ռուբեն Հակոբյանն էլ, հանդես գալով արդարացման միջնորդությամբ, պահանջեց անմեղ ճանաչել իր պաշտպանյալին:

Նա միջնորդեց նաեւ, որ դատարանը լրացուցիչ որոշում կայացնի հսկող դատախազի եւ Շիրակի մարզի քննչական բաժնի ավագ քննիչ Կ. Գաբրիելյանի վերաբերյալ եւ ուղարկի նրանց վերադասներին:

Փաստաբան Հակոբյանը պնդում է, որ դատաքննության ընթացքում ի հայտ են եկել մինչդատական վարույթում թույլ տված բազմաթիվ էական խախտումներ թե քննիչի, թե հսկող դատախազի կողմից:

Փաստաբանը դատարանին միջնորդեց դիմել ՀՀ գլխավոր դատախազին կամ Շիրակի մարզի դատախազին՝ ավագ քննիչ Կ. Գաբրիելյանի նկատմամբ քրեական գործ հարուցելու վերաբերյալ:

Նա ասում է, որ ավագ քննիչը, ըստ դատաքննության ընթացքում տրված ցուցմունքների, անցել է պաշտոնեական լիազորությունները, ապացույցներ է կեղծել եւ վկային հարկադրել է սուտ ցուցմունքներ տալ:

«Հանցագործության հատկանիշներ պարունակող տեղեկատվություններ են, որ ի հայտ են եկել դատաքննության ժամանակ, իսկ թե որքանով են ճիշտ կամ սխալ՝ անհրաժեշտ է պարզել»,- բացատրում է նա:

«Քննիչը նույն անձի՝ վկայի կարգավիճակով տրված ցուցմունքը հետագայում անգամ նույն տառասխալներով ու կետադրական սխալներով դարձրել է տուժողի ցուցմունք, ինչի տակ անձը առանց կարդալու ստորագրել է: Տուժող Գայանե Սարգսյանը հայտարարեց, որ ինքը չէր կարող այդ անենը մեկ ամիս հետո նույնությամբ կրկնել, բացի այդ, ասաց՝ այդ ծավալի ցուցմունք չի տվել»:

7-ամյա Արման Սրզումանյանի հարցաքննությանը մասնակից մանկավարժը դատարանում ցուցմունք է տվել, որ քննիչը մի



Մեղադրյալ Թադեւոս Գեւորգյանը:

շարք հարցեր է ուղղել երեխային, հարցաքննությունն էլ տեւել է 5-7 րոպե:

«Քրեական դատավարության օրենսգիրքը պահանջում է գրանցել ցանկացած հարց ու պատասխան: Հարցաքննության արձանագրության մեջ ոչ մի հարց չկա: Ավելին, կազմված արձանագրության համաձայն՝ հարցաքննությունը 30 րոպե է տեւել»,- ասում է փաստաբանը:

Դատարանում վկա Նելլի Խոջոյանը հայտարարել է, որ երբ իրեն բերման են ենթարկել Շիրակի մարզի նախաքննական մարմին, քննիչը վախեցրել է իրեն, գոռացել վրան՝ ասելով՝ եթե չասես, որ բռնաբարության փորձ տեղի է ունեցել, մենք քեզ կուղարկենք Աբովյանի կանանց գաղութ»:

«Իսկ երբ վկա Խոջոյանը վերոնշյալ դեպքի կապակցությամբ դիմում է հասցեագրել հսկող դատախազին, քննիչ Գաբրիելյանի ենթադրյալ ապօրինի գործողությունների վերաբերյալ դիմումը ուղարկվել է նույն քննիչին՝ ընթացքը լուծելու համար: Սա ուղղակի ծիծաղելի է»,- նախաքննական խախտումների մասին է պատմում փաստաբան Հակոբյանը;

Ըստ մեղադրական եզրակացության՝ Թադեւոս Գեւորգյանը իր կողմից վարած «Վազ 21-21» մակնիշի ավտոմեքենայով, ոգելից խմիչք օգտագործած վիճակում, Սպիտակ-Երեւան ճանապարհի 1-ին կիլոմետրի վրա ավտոմեքենան վարելով սահմանված թույլատրելի առավելագույն արագությունը գերազանցող արագությամբ եւ դեպքի վայրի ճանապարհահատվածում իրականացնելով վարած ավտոմոբիլի ընթացքի ոչ պատշաճ ու վտանգավոր կառավարում՝ ավտոմեքենան դուրս է բերել հանդիպակաց երթեւեկելի ուղեմաս եւ ընկել ճանապարհին հարող հանդամասը: Արդյունքում՝ ավտոմեքենայի ուղեւոր Վարդան Արզումանյանի առողջությանը պատճառվել է ծանր վնաս: Մինչ օրս նա չի կարողանում շարժվել, խոսել, լսել:

Վթարից երկու ամիս անց տուժող Գայանե Սարգսյանը, ով մյուս տուժող Վարդան Արզումանյանի հորեղբոր որդու կինն է, բացատրություն է տվել նախաքննական մարմնին, թե վթարից 4 տարի առաջ համագյուղացի Թադեւոսը փորձել է իրեն բռնաբարել:

Ինչպես դատական նախորդ նիստերին, այնպես էլ դատական վիճաբանությունների փուլում տուժող Գայանե Սարգսյանը հայտարարեց, որ իր նկատմամբ բռնաբարության փորձ չի եղել, հարազատներն են ստիպել, որ այդպես ասի:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ

Վանաձոր

# 73-ամյա տղամարդը պառկում է «բուլդոզերի» առաջ

## Որ քրտնաջան աշխատանքով ստեղծած այգին չոչնչացնեն

Գորիսի բնակիչ Մարտին Մայսուրյանի կողմից շուրջ 54 տարի մշակվող այգին Գորիսի քաղաքապետարանը վերցրել ու վաճառել է իր նախընտրած մարդուն:

Բանն այն է, որ Մարտին Մայսուրյանն այդ այգին դեռեւս խորհրդային տարիներից, բառի ուղիղ իմաստով՝ քար ու ձորից դարձրել է 8500 մետր ծառ ու թուփով մշակելի հողատարածք: Իսկ խորհրդային իշխանությունների որոշմամբ՝ այդ հողամասը ճանաչվել է տնամերձ հողատարածք եւ ներառվել Գորիսի գլխավոր հատակագծում: Հետագայում քաղաքապետարանը որոշ հողօգտագործողների թույլատրել է սեփականաշնորհել իրենց տարածքները, իսկ Մարտին Մայսուրյանին մերժել են: Մ. Մայսուրյանի պատմելով՝ իր հողատարածքի վրա աչք ուներ Սյունիքի մարզպետի կնոջ եղբայրը՝ Մելիք Բարսեղյանը, եւ հենց դա է եղել պատճառը, որ շուրջ 20 տարի չի կարողացել սեփականաշնորհել ամբողջ կյանքում ստեղծած ու ծաղկեցրած այգին: «18 անգամ դիմում եմ գրել, եւ բոլոր դիմումներս արհամարհվել են: Իմ 900 քմ հողատարածքը քաղաքապետարանը բաժանել է 2 մասի, ճանաչել անհայտ տնամերձ անօգտագործելի տարածք, հասցեն փոխել ու անուրդով վաճառել, ընդ որում՝ առանց ինձ նախապատվության իրավունք տալու: Ես բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ունեմ, որ տասնյակ տարիներ ես եմ օգտագործել այդ տարածքը: Ինձ ահաբեկում են՝ որ տունս ու այգիս կվերացնեն, 2 անգամ հինսուլտ եմ ստացել դրանց ձեռքից: 10 ամիս է՝ ոստիկանությունն ու քաղաքապետարանը գալիս են, որ բուլդոզերով քանդեն այգիս, բայց ես պառկում եմ բուլդոզերի առաջ, որ հանկարծ բան չանեն»: Ըստ Մ. Մայսուրյանի՝ իր հողատարածքը քաղաքապետարանը մաս-մաս է արել ու մի հատվածը սեփականաշնորհել մարզպետի աներձագին, մյուս մասը՝ վերջինիս ընկերոջը: Մեկ օր հետո ընկերը 2 միլիոն դրամով իր մասը վաճառել է կրկին մարզպետի աներձագին:



73-ամյա Մարտին Մայսուրյանը դիմել է Գորիսի ընդհանուր իրավասության եւ վերաքննիչ դատարան, բայց արդյունքի չի հասել: Պարոն Մայսուրյանի պատմելով՝ դատարանը հայցը չէր ընդունում, ձգձգում էր. «Հետո իմացա, որ մարզպետի աներձագը՝ Մելիք Բարսեղյանը, այդ հողատարածքը նվիրատվություն է ձեւակերպել իր մորը, մայրն էլ վաճառել է Մելիքի զոքանչին: Այս ամենն արել են, որպեսզի ես դատարանում պահանջելու բան չունենամ»:

Ինչպես պարոն Մայսուրյանն է վստահեցնում, բոլորը վախեցած են եւ չեն համարձակվում մարզպետ Սուրեն Խաչատրյանին եւ նրա հարազատներին դեմ դուրս գալ. «Մարզպետն ամբողջ Գորիսի շրջանն իր բնակիչներով սեփականաշնորհեց, բացի ինձանից: Այս խոսքերն ինքն անձամբ է ասել: Ես 20 տարի է՝ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղարն եմ: Ամեն ընտրությունների ժամանակ մարզպետն ինձ ստիպում է, որ ընտրությունները կեղծեմ հօգուտ իրենց: Ես, բնականաբար, միշտ էլ հրաժարվել եմ: Դիմել եմ նաեւ վճռաբեկ դատարան, եթե վճռաբեկն էլ մերժի, ուրեմն թող ինձանից չնեղանան ու էդ բոլոր խուլիգաններով գնան իրենց տները ու տնից դուրս չգան»:

Մարտին Մայսուրյանը թեեւ դիմել է ՀՀ նախագահին, դատախազություն ու արդարադատության նախարարություն, բայց ինչպես ինքն է ասում. «Հույս չունեմ, որ մի բան կանեն: Էս երկրում ոչ օրենք կա, ոչ էլ մարդկություն»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# Խախտվել է արտերկրում ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքը

Facebook սոցիալական ցանցում գործող «Իրազեկ եւ կողմնորոշված սերունդ» խումբը, որի մեջ զգալի թիվ են կազմում սփյուռքահայերը եւ արտերկրում ապրող ՀՀ քաղաքացիները, գործունեություն է ծավալում մեր ԲՈԼՈՐԻՍ Հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետության պետականաշինության գործընթացին սփյուռքահայությանը էլ ավելի մերձեցնելու ուղղությամբ: Քննարկումների ժամանակ մասնակիցներն այս պահին հրատապ են համարել արտերկրում բնակվող ՀՀ քաղաքացիների ընտրական իրավունքն իրագործելի դարձնելու հարցը: Ուստի, նախաձեռնող խումբը հորդորում է ՀՀ իշխանություններին եւ քաղաքական ուժերին ՀՀ քաղաքացու օգտին լուծել այս կարեւոր խնդիրը: Սփյուռքում այսօր մեծ թիվ են կազմում Հայաստանից հեռացած քաղաքացիները, ովքեր, ինչպես գիտեք, ունեն ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված բոլոր իրավունքները, այդ թվում՝ Հայաստանի տեղական եւ համապետական ընտրություններին մասնակցելու իրավունքը: Մայր օրենքը եւ դրա հիմք հանդիսացող կարեւոր գործիքը՝ ազատ քվեարկությունը, հաստատում են, որ ժողովուրդը իրականացնում է երկրի ղեկավարումը արդար ընտրությունների միջոցով: Սակայն արտերկրում ապրող ՀՀ քաղաքացիների համար ՀՀ ընտրություններին մասնակցելը գործնականում այսօր անհնարին է: 2008 թվականից նրանցից խլել են փաստացի բնակության վայրում քվեարկելու հնարավորությունը: Սա քաղաքացու սահմանադրական հիմնարար իրավունքի կոպիտ ոտնահարում է: ՀՀ իշխանությունները բնավ չեն արգելում ՀՀ քաղաքացուն մասնակցել երկրում իրականացվող ընտրություններին, պայմանով, որ քաղաքացին անձամբ ֆիզիկապես գտնվի եւ քվեարկի ՀՀ տարածքում, ինչը, համաձայնեք, արտերկրում ապրող ՀՀ քաղաքացիների գերիշխող մեծամասնության համար նյութական առումով պարզապես անիրագործելի է: Փաստորեն, հանրապետության սահմաններից դուրս հայտնված ՀՀ շարքային քաղաքացին չունի քվեարկելու իրավունք՝ անգամ արտերկրում գործող ՀՀ դիվանագիտական առաքելության տարածքում: Այդպես ՀՀ քաղաքացիների ընդհանուր թվի զգալի մասը դառնում է ձայնազուրկ: Մենք համոզված ենք, որ արտերկրում ապրող Հայաստանի քաղաքացիների՝ իրենց բնակության վայրում քվեարկելու իրավունքի վերահաստատումը կնպաստի մեր հանրապետության հզորացմանը եւ համայն հայության մասնակցությանը Հայրենիքի հզորացման վեհ գործին:

«Իրազեկ եւ կողմնորոշված սերունդ»
http://www.facebook.com/groups/204847362934366/

# «Ակադեմիական» կրքեր եւ աշխատավարձի խոստումներ

Վերջերս կայացան Բյուրականի աստղադիտարանի տնօրենի ընտրությունները, եւ այդ պաշտոնում 2 տարով վերընտրվեց աստղադիտարանի գործող տնօրեն Հայկ Հարությունյանը: Մյուս թեկնածուն «Գալակտիկա» ՓԲԸ տնօրեն Արա Միրզոյանն էր, որի թեկնածությունը կոլեկտիվի 2/3-ի հավանությանն էր արժանացել:

Սոցիալական ցանցերում եւ մասնավորապես facebook-յան «Պահանջում ենք գիտության ֆինանսավորման ավելացում» էջում թեմայի շուրջ բուռն քննարկումները դեռ շարունակվում են ու այն կարծիքն է շրջանառվում, թե Հայկ Հարությունյանը (լուսանկարում) «վերեւների» թեկնածուն էր, դրա համար էլ անտեսվել է Արա Միրզոյանին համակրող աստղադիտարանի կոլեկտիվի մեծամասնության կարծիքը:

Աստղադիտարանի տնօրենը, սակայն, համամիտ չէ իր դեմ ուղղված այդ պնդումներին: «Առավոտի» հետ զրույցում նա փաստեց, որ ակադեմիական ինստիտուտներում տնօրենի ընտրությունը, ըստ կանոնադրության, կատարվում է ԳԱԱ նախագահությունում, դրան նախորդում են մի քանի փուլեր՝ կոլեկտիվի, ԳԱԱ համապատասխան բաժանմունքի կարծիքի արտահայտում, իսկ վերջնական ընտրությունը վերապահված է ակադեմիայի նախագահությանը:

Հետաքրքրվեցինք՝ ինչպե՞ս կմեկնաբանի կոլեկտիվում իր՝ քիչ ձայներ ստանալը:

«Գոյություն ունեն պոպուլիզմի տարբեր տեսակներ, որոնցից սովորաբար չեմ օգտվում: Մյուս հավակնորդն անհիմն խոստումներ տվեց աշխատավարձերի բարձրացման հետ կապված, եւ դա այն դեպքում, երբ ակադեմիայի նախագահությունում գիտեն թե մեր ինստիտուտի, թե Միրզոյանի ղեկավարած հիմնարկի ֆինանսական վիճակը: Մյուս հավակնորդը խոստանում էր գումարներ բերել, մինչդեռ իր ղեկավարած հիմնարկում 10 ամիս աշխատավարձ չի վճարել: Հարց է առաջանում՝ ինչու այնտեղ չի վճարել, իսկ աստղադիտարանում՝ կվճարի»,- պատասխանեց Հայկ Հարությունյանը: Մեր այն դիտարկմանը, որ այսօր Բյուրականի աստղադիտարանը չունի նախկին փառքը, տնօրենը պատասխանեց. «Այդ փառքը չունի եւ չի ունենա որեւէ այլ տնօրենի դեպքում: Մյուս կողմից էլ՝ մեր աստղադիտարանի հետ աշխարհում հաշվի են նստում, մեր աշխատակիցները պարբերաբար հրավիրվում են եւ կոնֆերանսների, եւ արտերկրյա գիտական հիմնարկներում աշխատելու, ֆրանսիական, իտալական, ռուսական ընկերությունները համագործակցության պայմանագրեր են կնքում: Այսքանով հանդերձ, աստղադիտարանի վերջին 1,5 տարվա հաջողությունները մյուս հավակնորդը եւ նրա կողմնակիցները շուռ են տալիս ու ներկայացնում որպես անօգուտ ծրագրեր»: Հայկ Հարությունյանն անհիմն է համարում նաեւ այն մեղադրանքները, թե աստղադիտարանում գումարներ են փոշիացվում. «Ի տարբերություն մյուս ինստիտուտների, Բյուրականի աստղադիտարանը ՀՀ բյուջեից ավելի քիչ գումար է ստանում՝ տարեկան 63,5 մլն դրամ, որից 48 մլն-ը աշխատավարձի ֆոնդն է, 7 միլիոնը գնում է էներգակիրների, 4 մլն-ը տրանսպորտի վրա: Մնացած բոլոր ծախսերի համար մնում է 3-4 մլն դրամ: Էլ որտեղից գումար, որ փոշիացվի»: Մեր զրուցակիցը հայտնեց, որ այսուհետեւ աստղադիտարանի տնօրենի աշխատանքը վերահսկվելու է 3 ակադեմիկոսներից բաղկացած խորհրդի կողմից, եւ ցանկացած կարեւոր որոշման դեպքում տնօրենը խորհրդակցելու է նրանց հետ:



Աստղադիտարանի տնօրենի պաշտոնի մյուս հավակնորդին՝ Արա Միրզոյանին էլ հարցրինք, ինչո՞ւ չընտրվեց, եթե իսկապես վայելում էր կոլեկտիվի 2/3-ի համակրանքը: «Եթե ես պատասխանեմ, իմ բացատրությունը սուբյեկտիվ կլինի, օբյեկտիվ պատասխան ստանալու համար լավ կլինեն հարցնեք հենց այդ 2/3-ից»,- ասաց նա: Հայկ Հարությունյանի որակմամբ պոպուլիստական խոստումներին պարոն Միրզոյանը չցանկացավ հակադարձել, նշեց, որ ամեն ինչ ժամանակը տեղը կդնի, ինքն էլ չի ցանկանում գիտական հանրությանը կիսել իր կողմնակիցների եւ հակառակորդների:

Տնօրեն ընտրվելու դեպքում ինչպե՞ս պիտի աստղադիտարանի նախկին փառքը վերադարձներ:

«Առաջին հերթին պետք է շփվել այսօրվա առաջատար գիտական ուղղությունների հետ, դրա համար ողջ աշխարհում կազմակերպում են workshop-եր, շփումներ, մտքերի փոխանակումներ, մի բան, որ Բյուրականում երբեւիցե չի եղել: Այնտեղ ընդամենը կազմակերպվել են երիտասարդների համար դպրոցներ, որը ղեկավարությունը գնահատում է շատ բարձր, բայց ճիշտ կլինի այդ մասին հարցնել հենց երիտասարդությանը: Մենք ունենք շատ մասնագետներ, որոնք լքել են Բյուրականը, այնտեղ ակտիվ մթնոլորտ չկա, երիտասարդներին տրված խոստումները չեն կատարվում, Բյուրականի աստղադիտարանը չունի գիտական ուղղվածություն եւ ծրագիր»,- հայտարարեց չընտրված թեկնածուն:

Իսկ ինչո՞ւ է ուզում անպայման ղեկավար դառնալ մի օջախում, որը քիչ է ֆինանսավորվում եւ այն ղեկավարելը առանձնապես հեշտ չէ: Արա Միրզոյանն ասաց, որ դա իր վաղեմի ցանկությունն է, ինքը ծնվել է Բյուրականում, 10 տարի աշխատել այնտեղ, հայրն էլ 26 տարի աստղադիտարանի փոխտնօրենն է եղել: Պարոն Միրզոյանը հայտարարում է, որ ի վիճակի է Բյուրականի աստղադիտարանը ոտքի կանգնեցնել, մի բան, որ, իր ձեւակերպմամբ, ժամանակին արել է Գառնիի իր հիմնարկում: Ասում է՝ 52 մլն դրամ պարտքով կառույց է ժառանգել ու խելքի բերել:

Զրուցեցինք նաեւ մեր ընկալմամբ չեզոք մարդու՝ Հայկական աստղագիտական ընկերության համանախագահ, Բյուրականի աստղադիտարանի առաջատար գիտաշխատող Արեգ Միքայելյանի հետ, որը հայտնի է որպես երիտասարդ գիտնականների համար զանազան ծրագրեր իրականացրած անձնավորություն:

Նրա խոսքով. «Հարությունյանն ընտրվել է համաձայն բոլոր պահանջների եւ ոչ մի խախտում էլ չկա: Կոլեկտիվը հունվարի 31-ին կայացած իր ժողովում քվեարկությամբ իր վերաբերմունքն է արտահայտել տնօրենի երկու առաջադրված թեկնածուների վերաբերյալ (Հարությունյան՝ 16, Միրզոյան՝ 28 ձայն), սակայն դա ընտրություն չէր: Ընտրակարգի համաձայն, նման քննարկում տեղի ունեցավ նաեւ ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի եւ աստղաֆիզիկայի բաժանմունքի փետրվարի 6-ին կայացած ժողովում, որտեղ արդեն բոլորն արտահայտվեցին Հարությունյանի օգտին եւ բաց քվեարկությամբ նրան միաձայն երաշխավորեցին տնօրեն ընտրվելու համար: Սա նույնպես ընտրություն չէր: Բուն ընտրությունը տեղի է ունեցել ՀՀ ԳԱԱ նախագահության փետրվարի 8-ի նիստում, որտեղ 15 քվեարկողներից 14-ը ձայները տվել են Հարությունյանի օգտին, իսկ մեկ քվեաթերթիկ անվավեր է ճանաչվել: Կանոնադրության համաձայն տնօրեն կարելի է ընտրել մինչեւ 5 տարի ժամկետով, սակայն ակադեմիան՝ հաշվի առնելով կոլեկտիվի կարծիքը, Հարությունյանին ընտրել է 2 տարով, այսինքն՝ կոլեկտիվի կասկածները ինչ-որ չափով ազդել են նախագահության որոշման վրա, բայց, այնուամենայնիվ, Միրզոյանի նկատմամբ Հարությունյանին գերապատվություն տալը կասկածից վեր էր: Սա իրոք օբյեկտիվ իրողություն է, քանի որ կարող ենք պարզ համեմատություն կատարել: Հարությունյանը 20 տարուց ավելի աշխատել է աստղադիտարանի ղեկավարության կազմում, ունի գիտակազմակերպական աշխատանքի մեծ փորձ, ճանաչված է գիտական հանրության կողմից, մանրամասն տեղյակ է աստղադիտարանի բոլոր խնդիրներին: Միրզոյանը գիտության մեջ աշխատել է միայն իր աշխատանքային գործունեության առաջին տարիներին (շուրջ 20 տարի եւ ավելի առաջ), այնուհետեւ զբաղվել է գործարարությամբ, իսկ ներկայումս «Գալակտիկա» ՓԲԸ տնօրենն է: Ես նույնիսկ կարծում եմ, որ եթե այլ թեկնածուներ չեն առաջադրվել, ապա դա այն իրողության վկայությունն էր, որ Հարությունյանին արժանի հակառակորդներ չկային, դե իսկ կոլեկտիվի քվեարկության ժամանակ Միրզոյանի դեպքում նշանակություն է ունեցել աշխատավարձերի կրկնակի ավելացման վերաբերյալ նրա տված «խոստումը», ինչին ես իհարկե լուրջ չեմ կարող վերաբերվել: Մարդկային առումով դա էլ հասկանալի է, քանի որ կոլեկտիվի մեծ մասը շատ դժգոհ է եւ հազիվ է կարողանում օրվա հացը վաստակել»:

Պարոն Միքայելյանը ճշմարտության դեմ չմեղանչելու համար հավելեց, որ Հայկ Հարությունյանը վերջին տարիներին համեմատաբար ակտիվ չի գործել, բայց դրա պատճառներն էլ կան. «Դրանք կոլեկտիվի որոշ անդամներին «չնեղացնելու» մեջ են, ինչը շատ ցավալի է: Անձամբ ես այդպիսի քաղաքականություն չէի վարի, մանավանդ որ՝ խոսքը գիտության համար վաղուց անպիտան դարձած մարդկանց մասին է»:

Արեգ Միքայելյանին հարցրինք՝ ինչպես է վերաբերվում այն կարծիքին, որ Հայկ Հարությունյանը «վերեւների» թեկնածուն է:

«Զարմանալի եւ անբացատրելի իրողություն է, բայց մեզ մոտ՝ Բյուրականում, երբեք նորմալ ընտրություններ չեն լինում... Հիշենք 1988 թվականին Համբարձումյանի հրաժարականից հետո տեղի ունեցած բոլոր ընտրությունները, երբ իրարանցում է սկսվում, թեկնածուներից եւ ոչ մեկը չի հավաքում ձայների անհրաժեշտ քանակ, ընտրությունները ձգձգվում են, ի վերջո նշանակվում է տնօրենի պաշտոնակատար եւ այլն: Նույնիսկ գիտական խորհրդի կազմ ընտրելիս մեր կոլեկտիվը բոլորին «ջնջում» է, եւ արդյունքում, օրինակ, ընտրվում է միայն 3 հոգի, կամ եղել է նույնիսկ՝ 1 (ի դեպ, այդ մի դեպքում՝ հենց Հայկ Հարությունյանն էր): Էլ ի՞նչ իրավունքների ոտնահարման կամ կոլեկտիվի կարծիքին դեմ գնալու մասին է խոսքը: Այս ամենն ասում եմ, քանի որ օրինաչափ է այն հարցը, թե այնուամենայնիվ ինչո՞ւ կոլեկտիվի քվեարկության պատկերն այդպիսին ստացվեց: Այս անգամ էլ, նորից տեղի է ունեցել իրական թեկնածուի «ջնջում», իսկ ձայները տվել են մեկին, ում մեծամասամբ չեն էլ ճանաչում: Սխալ է ներկայացվում նաեւ այն, թե իբր Միրզոյանն ուներ լավ ծրագիր. այնտեղ որեւէ էական գաղափար չկար եւ, ամբողջությամբ հանգում էր նրան, որ իբր աշխատավարձերը բարձրացվելու են»:

Ա. Միքայելյանը ընտրությունների արդյունքները գնահատում է օրինաչափ եւ նշում, որ Հարությունյանը ոչ թե ակադեմիայի դրածոն է, այլ այս իրավիճակում միակ հնարավոր տարբերակը: Նաեւ փաստում է, որ ժամանակին Հարությունյանին առաջին անգամ փոխտնօրեն է նշանակել հենց ինքը՝ Վիկտոր Համբարձումյանը:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# «ՎիվաՍել-ՄՏՍ»-ն ու ռոբոտաշինությունը

Ռոբոտատեխնիկայի դպրոցական խմբակներին (ԱրմՌոբոտիքս խմբակ) նվիրված երեկվա ասուլիսի ընթացքում Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԻՏՁՄ) եւ «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերությունը կրթական 5 հաստատության հանձնեցին ուսումնական ռոբոտներ՝ խմբակներում դասավանդում կազմակերպելու համար: Այդ ուսումնական հաստատություններն են «Քվանտ» եւ Պոլիտեխնիկի հենակետային վարժարանները, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը, թիվ 131 եւ «Այբ» ավագ դպրոցները:

«ՎիվաՍել-ՄՏՍ»-ը համագործակցում է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության հետ՝ երկրում ռոբոտաշինության զարգացումը խրախուսելու նպատակով: Այդ զարգացումն ապահովելու կարեւոր նախապայման է փոքր տարիքից ռոբոտաշինության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը»,- ասել է «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը: «Լինելով կորպորատիվ պատասխանատու քաղաքացի, «ՎիվաՍել-ՄՏՍ»-ն աջակցում է տեխնոլոգիայի՝ ներառյալ ռոբոտիքսի ոլորտի զարգացմանը, ինչը կարող է դրական ազդեցություն ունենալ Հայաստանում հարակից ոլորտների վրա, ինչպես նաեւ միջազգային շուկաներում մեր երկրի համար մրցունակության ապահովմանը: Մենք այնտեղ ենք, որտեղ կա զարգացման ներուժ, եւ որտեղ մենք կարող ենք քաջալերել երիտասարդների ստեղծագործ միտքը»,- նշել է Ռալֆ Յիրիկյանը:

«Անցած տարի հետաքրքիր փաստ արձանագրվեց Հայաստանի ռոբոտների բաց առաջնության՝ ԱրմՌոբոտիքսի շրջանակներում, ինչը, ենթադրում ենք, կուրախացնի հասարակությանը: Դպրոցականները սկսել են ակտիվորեն զբաղվել ռոբոտաշինությամբ, ինչն արդեն տալիս է իր պտուղները: Այժմ ԱրմՌոբոտիքսի յուրաքանչյուր մրցույթի մասնակցում է դպրոցականներից կազմված թիմ եւ արձանագրում հաջողություններ: Նման փոփոխությունը պայմանավորված է դպրոցներում ռոբոտաշինության խմբակների ձեւավորմամբ»,- նշում է ԻՏՁՄ գործադիր տնօրեն Կարեն Վարդանյանը:

Ռոբոտատեխնիկայի դպրոցական խմբակների կազմակերպիչն է Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը, գլխավոր հովանավորն է «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերությունը:

## Իսպիրյանի «Once Upon a Time in Yerevan»-ը




Չճանաչելով անցյալը՝ դժվար է ստեղծել գրագետ եւ ճիշտ երաժշտություն: Սա սիրված էստրադային երգիչ Արթուր Իսպիրյանի կարգախոսն է: Ի տարբերություն իր շատ գործընկերների, Արթուր Իսպիրյանը կույր չգնաց անկախության տարիներին հայկական երաժշտարվեստ ներթափանցած, այսպես կոչված՝ փոփ-ռաբիսին, չնայած վերջինս ավելի շահութաբեր է: Նա շարունակում է ստեղծագործել՝ հավատարիմ մնալով ինքն իրեն: Օրերս լույս է տեսել նրա նոր ալբոմը՝ «Once Upon a Time in Yerevan» (թարգմանաբար՝ «Ժամանակին Երեւանում»), որտեղ զետեղված են Առնո Բաբաջանյանի, Մարտին Վարդազարյանի, Արտեմի Այվազյանի, Կոնստանտին Օրբելյանի եւ այլոց ստեղծագործությունները, փաստորեն CD-ին հին, բայց ոչ ժամանակավրեպ գործերի ինքնատիպ ծաղկաքաղ է: Երգերը Արթուրը հայթայթել է Երվանդ Երզնկյանի ու Մարտին Վարդազարյանի հետ միասին՝ ռադիոյի արխիվից:

Գ. Հ.

VivaCell MTS

# ԷՔԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Ավարտվեց շախմատի «Aeroflot Open»-ը

Մոսկվայում ավարտվեց շախմատի «Aeroflot Open» միջազգային ներկայացուցչական մրցաշարը, որի բոլոր երեք խմբերում էլ Հայաստանը ներկայացուցիչ ուներ:

Ուժեղագույնների խմբում հանդես էին գալիս գրոսմայստերներ Հրանտ Մելքումյանը, Վլադիմիր Հակոբյանն ու միջազգային վարպետ Կարեն Գրիգորյանը: Նրանցից համեմատաբար հաջող հանդես եկավ Մելքումյանը, որն ինը հնարավորից վաստակելով 6,0 միավոր՝ բաժանեց 4-8-րդ հորիզոնականները եւ լրացուցիչ գործակիցներով հանգրվանեց 7-րդ տեղում: Գրիգորյանն ու Հակոբյանն իրենց անվան դիմաց գրանցեցին 5,5-ական միավոր եւ մրցաշարային աղյուսակում համապատասխանաբար գրավեցին 22-րդ եւ 24-րդ հորիզոնականները:

«B» խմբում առաջին տասնյակը (9-10-րդ տեղեր) 6,0-ական միավորով եզրափակեցին Հովիկ Հայրապետյանն ու Հովհաննես Գաբուզյանը: Իսկ երրորդ խմբում հանդես եկող հայ շախմատիստները համեստ դիրքեր զբաղեցրին:

## Շախմատի աշխարհի նոր չեմպիոնին կորոշի Տրետյակովյան պատկերասրահը



Այս տարվա մայիս ամսին նշանակված շախմատի աշխարհի թագի համար գործող չեմպիոն Վիշվանաթան Անանդի (նկարում՝ աջից) եւ հավակնորդ Բորիս Գելֆանդի (նկարում՝ ձախից) միջեւ մրցամարտը կկայանա Մոսկվայում՝ Տրետյակովյան պետական պատկերասրահի «Ինժեներական» մասնաշենքում:

Այս մասին տեղեկացնում է «Sport-express»-ը՝ նշելով, որ այդ մասին պաշտոնական համաձայնագիրը փետրվարի 20-ին ՖԻԴԵ-ի նախագահ Կիրսան Իլյումժինովի ներկայությամբ ստորագրելու են ՌԵՖ դիտորդական խորհրդի նախագահ Արկադի Դվորկովիչը եւ Տրետյակովյան պետական պատկերասրահի գլխավոր տնօրեն Իրինա Լեբեդեւան:

Ռուս գործարար Անդրեյ Ֆիլատովի հովանավորությամբ կայանալիք Անանդ-Գելֆանդ մրցամարտի հաղթողը երկու տարով կհռչակվի շախմատի աշխարհի թագակիր: Մրցամարտի ընդհանուր մրցանակային ֆոնդը $2,55 միլիոն է, որի 60%-ը բաժին է հասնելու հաղթողին, 40%-ը՝ պարտվողին: «Sport-express»-ը հիշեցնում է, որ աշխարհի չեմպիոնի կոչման համար վերջին մրցամարտը Մոսկվայում մեկնարկել է 1984 թվականի սեպտեմբերի 9-ին՝ գործող չեմպիոն Անատոլի Կարպովի եւ նրան ձեռնոց նետած Գարրի Կասպարովի միջեւ՝ Միությունների տան սյունազարդ դահլիճում եւ ընդհատվել 1985 թվականի փետրվարի 15-ին՝ «Կոսմոս» հյուրանոցում: Այդ պահին չնայած հաշվի մեջ առջեւում էր Կարպովը՝ 5:3, սակայն հաղթողի անուն չհայտարարվեց:

## Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի նոր բարձունքը



Երեկ ֆուտբոլային ասոցիացիաների միջազգային միությունը՝ ՖԻՖԱ-ն, հրապարակեց ազգային հավաքականների վարկանիշային դասակարգման փետրվար ամսվա ցուցակը:

Հայաստանի ազգային հավաքականն այդ ցուցակում բարձրացել է մեր ֆուտբոլի պատմության մեջ ռեկորդային բարձունքի: Գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի գլխավորած թիմն առնվազն մեկ ամիս լինելու է 41-րդն աշխարհում եւ ռեկորդային այդ ցուցանիշն այս տարի ավելի բարելավելու լավ հեռանկարներ ունի, եթե հաջող հանդես գա փետրվարի 28-29-ին կայանալիք Սերբիայի եւ Կանադայի ընտրանիների հետ ընկերական հանդիպումներում եւ լավ մեկնարկի աշխարհի 2014 թվականի առաջնության որակավորման փուլի արտագնա առաջին երկու հանդիպումներում (սեպտեմբերի 7-ին՝ Մալթայի եւ սեպտեմբերի 11-ին՝ Բուլղարիայի հետ):

ՖԻՖԱ-ի ցուցակը կրկին գլխավորում է աշխարհի գործող չեմպիոն Իսպանիան: Իսկ ահա առաջատարների եռյակը կազմող հաջորդ երկու հավաքականները փոխել են տեղերը: Փետրվար ամսին լավագույնների տասնյակն այսպիսի տեսք ունի. Իսպանիա, Գերմանիա, Հոլանդիա, Ուրուգվայ, Անգլիա, Պորտուգալիա, Բրազիլիա, Իտալիա, Խորվաթիա, Դանիա:

Ինչ վերաբերում է աշխարհի 2014 թվականի առաջնության որակավորման փուլի եվրոպական գոտուց մեզ հետ միասին «B» խումբ ընդգրկված երկրներին, գլխավոր մրցակիցները նույնպես առաջընթաց են արձանագրել: Մասնավորապես, Իտալիան մեկ քայլ բարձրացել է եւ հանգրվանել 8-րդ հորիզոնականում, Դանիան եզրափակում է առաջատարների տասնյակը (+1), Չեխիան առաջադիմել է երկու աստիճան եւ այժմ 29-րդն է: Իսկ ահա Բուլղարիան՝ -5 եւ Մալթան՝ -3 ցուցանիշներով, համապատասխանաբար, զբաղեցնում են 88-րդ եւ 159-րդ հորիզոնականները:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

ԺԱՄԱՆՑ

# Կաղինը, ռեհանն ու իշխանը կրքահարույց են

### Իսկ ալկոհոլը քայքայում է տղամարդու լիբիդոյի հորմոնը

Ասում են՝ սննդամթերքի տեսակից կախված է նաեւ մարդու սեռական կյանքի որակը, այդ պատճառով էլ սեքսուալ հաղթանակներ նվաճելու նպատակով շատերը դիմած կլինեն ավանդական հնարքների:

Aravot.am-ի հետ զրույցում սեքսապաթոլոգ Վրեժ Շահրամանյանն ասաց, որ հայերի շրջանում այս հարցում մեծ դեր ունեցավ հայտնի «Ինն ու կես շաբաթ» էրոտիկ ֆիլմը, որը դիտելուց հետո լայն տարածում գտավ սիրեցյալի մարմնին բալի մուրաբա քսելու տարբերակը: «Սեքսուալ խոհանոցում մեծ ուշադրության են արժանի ֆոսֆորով հարուստ մթերքները: Դեռ հին հռոմեացիներն ասում էին, որ ձուկը սնում է ցանկասիրությունը: Կրքահարույց ծովամթերքի ցանկում են կատվաձուկը, կաղամարը, ոստրեն, ինչպես նաեւ իշխանը: Ուժեղ խթանիչ ներգործություն ունեն նաեւ մրգերը: Արեւելքում այսօր նռան հատիկները խորհուրդ են տրվում զուգընկերոջը՝ սիրո գիշերից առաջ: Այս հարցում «օգնական» է համարվում նաեւ անանասը: Բանջարեղենից առանձնացնում են ծաղկակաղամբն ու գազարը: Ընկույզը (հատկապես՝ սովորական, նուշը եւ պիստակը) պարունակում է վիտամինների եւ միկրոէլեմենտների բացառիկ հավաքածու, ինչն անփոխարինելի է հոգնածության եւ սթրեսների ժամանակ»,- բացատրում է բժիշկը՝ շեշտելով, որ շատերը, հատկապես երիտասարդները այն թյուր կարծիքի են, թե ալկոհոլը խթանում է սեռական ցանկությունն ու ուժեղացնում պոտենցիան: Բայց սեքսոլոգները այս տեսակետի հետ համաձայն չեն, քանի որ հարբեցողությունը «ստիպում» է լյարդին արտադրել հսկայական քանակությամբ ֆերմենտներ, որոնք քայքայում են տեստոստերոնը՝ տղամարդու լիբիդոյի (սեռական ցանկության) հորմոնը:



«Հետազոտությունները փաստում են, որ միջին տարիքի տղամարդկանց զգալի մասը չի կարողանում էրեկցիայի հասնել անգամ երեք կում լիկյորից հետո: Իսկ երկարատեւ հարբեցողությունը կարող է հանգեցնել սեռական անկարողության եւ անպտղության: Թունդ ըմպելիքներ օգտագործելը, ինչպես նաեւ մեծ քանակությամբ գարեջուր կամ գինի խմելը սպառում է ֆոլաթթվի պաշարները: Օրգանիզմում նրա պակասի ախտանշաններն են՝ դյուրագրգռություն, մոռացկոտություն, թուլություն, հոգնածություն, հաճախակի լուծ, գլխացավ եւ սեքսուալ ակտիվության նվազում: Այնպես որ, ինքներդ որոշեք՝ խմե՞լ, թե՞ ոչ»,- ասում է բժիշկը, ըստ որի՝ սեռական ակտիվությունը խթանող միջոցները կոչվում են աֆրոդիզիակներ՝ ի պատիվ հին հունական սիրո աստվածուհու՝ Աֆրոդիտեի:

«Աֆրոդիզիակների շարքում նեխուրը առաջատարներից է: Պատահական չէ, որ Լյուդովիկոս 15-րդի սիրուհի մարքիզուհի դե Պոմպադուրը, ով «անկողնային վագրուհի» էր, միշտ նեխուրով տաք շոկոլադ էր ըմպում: Հնդկացիները, արաբներն ու չինացիները սեռական կարողությունը պահպանելու համար հնուց ի վեր նուշ են օգտագործում: Իսկ կաղինը համարում են «կրքի կորիզ»՝ նրա գրգռիչ ազդեցության համար: Հնդկաստանում սիրային լավագույն ուտելիքներից է մեղրով պիստակը: Ցայտուն կերպով սեռական ցանկություն է ուժեղացնում ռեհանը: Այն խորհուրդ է տրվում հաճախակի օգտագործել 50-ն անց մարդկանց: Սոխն ու սխտորը բոլոր ժամանակներում էլ հայտնի են եղել իբրեւ սեռական ցանկության խթանիչներ: Այդ պատճառով իրենց հայրենիքում՝ Եգիպտոսում, սոխն ու սխտորը սուրբ բույսեր են համարվում»,- սեքսուալ ցանկությունը խթանող մթերքները թվելով՝ ասաց Վ. Շահրամանյանը, բացատրելով, թե ինչո՞ւ է ամուսնական առաջին ամիսը կոչվում «մեղրամիս»:

«Մեղրը նույնպես հրաշալի աֆրոդիզիակներից է: Հին Պարսկաստանում հարսանիքից հետո նորապսակները մեկ ամիս շարունակ մեղրաջուր էին խմում՝ իրենց ապագա երեխային շուտ բեղմնավորելու նպատակով: Ծովային «ծագմամբ» աֆրոդիզիակներից «ամենացնցողը», թերեւս, ոստրեն է, քանի որ այն ոչ միայն օգտակար է, այլեւ շատ ռոմանտիկ տեսք ունի: Սմբուկը, լոբին, սունկը, ծաղկակաղամբը, դեղձը, բանանը, խնձորը, խաղողն ու շոկոլադը սեքսուալ կյանքը կարող են դարձնել ավելի հետաքրքիր եւ հագեցած: Իսկ ամենակարեւորը՝ ամեն ինչ պետք է լինի չափի մեջ, որովհետեւ միեւնույն մթերքը քիչ քանակությամբ օգտագործելու դեպքում կարող է ակտիվացնել սեռական ցանկությունը, իսկ չարաշահելու դեպքում՝ ընկճել այն»,- հավելեց Վրեժ Շահրամանյանը:

Ե. Հ.

## «Հայ սուպերսթարի» մասնակիցներից ոչ ոք չլքեց նախագիծը

Լիաննա Արոյանը, Վարդինե Ավագյանը, Երվանդ Մաթոսյանը «Շանթ» հեռուստաընկերության հեռարձակվող «Հայ սուպերսթար» նախագծի երեկվա ամենահուզված մասնակիցներն էին: Առաջին գալահամերգի ամփոփիչ փուլն էր, նրանք հայտնվել էին «վտանգավոր գոտում». անցած համերգից ժյուրին եւ հեռուստադիտողը հենց այս մասնակիցներից էին դժգոհ մնացել: Երիտասարդ երգիչները անհանգիստ էին, բայց հեռանալուն չէին հավատում: «Վտանգավոր գոտում» հայտնվեց մասնակիցներից նաեւ Լիլիթ Խաչատրյանը, հուզվեց, վախեցավ, բայց այստեղ նրան սպասվում էր ոչ թե նախագիծը լքելու «բոթը», այլ ծննդյան անակնկալ շնորհավորանքը: Լիլիթը ծաղիկներ ստացավ, իսկ նրա ընկերները չլքեցին «Հայ սուպերսթարը»: Նախագծի ռեժիսոր, պրոդյուսեր Աննա Թադեւոսյանն ասում է. «Քանի որ սա առաջին համերգն էր, իսկ առաջին համերգին միշտ հուզվածություն կա, ինչը կարող է խանգարել անգամ պոտենցիալ ունեցող մասնակցին, որոշեցինք նորից հնարավորություն տալ նրանց աշխատելու»: Ռեժիսորը նաեւ հաճելիորեն զարմացած է. քվեարկության արդյունքները փաստում են, որ նախագծի 5-րդ եթերաշրջանն ընդունվել է հասարակության կողմից:

ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մանրամասները՝ «Առավոտ երիտասարդականում»: